Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 03

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության լիցենզավորման հանձնաժողովի նիստի

<<28>> փետրվարի 2024թ. ք. Երևան

2024 թվականի փետրվարի 28-ին տեղի ունեցավ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության լիցենզավորման հանձնաժողովի նիստը:

Հանձնաժողովի 6 անդամներից նիստին մասնակցում էին՝

Ա. Խաչատրյան — Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության իրավաբանական վարչության պետ, հանձնաժողովի նախագահի տեղակալ

Ա. Ստեփանյան — Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության լիցենզավորման և թույլտվությունների բաժնի պետ, հանձնաժողովի անդամ

Խ. Սողոմոնյան — Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության պետ, հանձնաժողովի անդամ

Ռ. Այվազյան — Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության բաժնի պետ, հանձնաժողովի անդամ:

Նիստը նախագահում էր հանձնաժողովի նախագահի տեղակալ Ա. Խաչատրյանը: Նիստից բացակայում էին հանձնաժողովի նախագահ Ա. Սիմոնյանը և հանձնաժողովի անդամ Տ. Գասպարյանը:
Նիստն արձանագրում էր Ա. Ստեփանյանը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ո Ւ Մ

1.Տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և ներդիր տրամադրելու համար ներկայացված 2 հայտերի քննարկում:

2.Հայաստանի Հանրապետությունում սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և լիցենզիայի ներդիր տրամադրելու ներկայացված 2 հայտերի քննարկում:

3.Անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզիա և լիցենզիայի ներդիր տրամադրելու համար ներկայացված 1 հայտի քննարկում:

4. Ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների իրականացման լիցենզիա և լիցենզիայի ներդիր տրամադրելու համար ներկայացված 1 հայտի քննարկում:

5. Հայաստանի Հանրապետությունում սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների

տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիան և լիցենզիայի ներդիրն ուժը կորցրած ճանաչելու համար ներկայացված 4 դիմումների քննարկում:

6.Անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզիան և լիցենզիայի ներդիր/ներ/ն ուժը կորցրած ճանաչելու համար ներկայացված 3 դիմումների քննարկում:

1. Տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության իրականացման լիցենզիա և ներդիր տրամադրելու համար ներկայացված հայտերի քննարկում

1.1 Քննարկվեց՝ «ՎԵԴՈՒ ԲՈՒԱՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության /այսուհետ՝ նաև՝ Կազմակերպություն/ 2024 թվականի փետրվարի 13-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը և փետրվարի 16-ին ի լրումն ներկայացված նյութերը՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և ունիվերսալ հոսքագծի ներդիր տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը ներկայացրեց, որ Կազմակերպությունը 2024 թվականի փետրվարի 13-ին ներկայացրել է հայտ և հայտին կից փաստաթղթեր՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և ունիվերսալ հոսքագծի ներդիր տրամադրելու մասին՝ ՀՀ, Արարատի մարզ, ք. Վեդի, Արարատյան 113 գործունեության վայրում: 2024 թվականի փետրվարի 16-ին Կազմակերպությունը ներկայացրել է լրացուցիչ փաստաթղթեր, մասնավորապես՝ գործունեության վայրի էսքիզային գծագիրը և արատորոշման միջոցների ստուգափման վկայականները: Կազմակերպության գործունեության վայրում ուսումնասիրությունն իրականացվել է Լիցենզավորման հանձնաժողովի անդամներ Ա. Ստեփանյանի և Ռ. Այվազյանի կողմից: Արդյունքում անհրաժեշտություն է առաջացել իրականացնել լրացուցիչ ուսումնասիրություն և կրկին չափագրել արտադրական տարածքը՝ գործի քննարկման համար էական համարվող հանգամանքներ պարզելու նպատակով:

Որոշեցին՝

Գործի քննարկման համար էական համարվող հանգամանքներ պարզելու նպատակով հայտին կից ներկայացված փաստաթղթերը լրացուցիչ ուսումնասիրության կարիք ունեն:

Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի՝ եզրակացություն ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին՝ «ՎԵԴՈՒ ԲՈՒԱՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և ունիվերսալ հոսքագծի ներդիր տրամադրելու համար հարուցված վարչական վարույթը երկարաձգել 10 օրով:

1.2 Քննարկվեց՝ անհատ ձեռնարկատեր ՎԱՐԴԱՆ ՀԱԿՈԲԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ /այսուհետ՝ Կազմակերպություն/ 2024 թվականի փետրվարի 13-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը և փետրվարի 21-ին ի լրումն ներկայացված նյութերը՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և թեթև տրանսպորտային միջոցների հոսքագծի ներդիր տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը ներկայացրեց, որ Կազմակերպությունը 2024 թվականի փետրվարի 13-ին ներկայացրել է հայտ և հայտին կից փաստաթղթեր՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և թեթև տրանսպորտային միջոցների հոսքագծի ներդիր տրամադրելու մասին:

հոսքագծի ներդիր տրամադրելու մասին՝ ՀՀ, Արմավիրի մարզ, համայնք Արաքս, գ. Գայ, Ա. Խաչատրյան փողոց 6/1 գործունեության վայրում: 2024 թվականի փետրվարի 21-ին Կազմակերպությունը ներկայացրել է լրացուցիչ փաստաթղթեր, մասնավորապես՝ հայտ ձև 1-ը և Կազմակերպության անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը՝ վերացնելով հայտում և հայտին կից փաստաթղթերում առկա թերությունները:

Կազմակերպության գործունեության վայրում ուսումնասիրությունն իրականացվել է Լիցենզավորման հանձնաժողովի անդամներ Խ. Սողոմոնյանի, Ա. Ստեփանյանի և Տ. Գասպարյանի կողմից:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց հանձնաժողովի քարտուղար Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

ԱՁ ՎԱՐԴԱՆ ՀԱԿՈԲԻ ՀԱԿՈԲՅԱՆ	4 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝

Ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ կառավարության 2021 թվականի սեպտեմբերի 24-ի N 1565-Ն և 2007 թվականի փետրվարի 15-ի N 690-Ն որոշումներով հաստատված կարգերի պահանջներին՝ ենթակա է բավարարման:

Համաձայն «Լիցենզավորման մասին» օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

2. Հայաստանի Հանրապետությունում սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և ներդիր տրամադրելու համար ներկայացված հայտի քննարկում

2.1 Քննարկվեց՝

«ԱՎԱՆ ՍԵՐՎԻՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության /այսուհետ՝ Կազմակերպություն/ 2024 թվականի փետրվարի 13-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը՝ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և գազաբալոնների պարբերական վկայագրման ներդիր տրամադրելու մասին՝ ՀՀ, ք. Երևան, Ավան, Դ. Մալյան փողոց 55 գործունեության վայրում:

Ա. Ստեփանյանը ներկայացրեց, որ Կազմակերպությունը 2024 թվականի փետրվարի 13-ին լիազոր մարմին է ներկայացրել սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և գազաբալոնների պարբերական վկայագրման ներդիր տրամադրելու հայտ՝ ՀՀ, ք. Երևան, Ավան, Դ. Մալյան փողոց 55 գործունեության վայրում:

Կազմակերպության արտադրական բազայի ուսումնասիրությունն իրականացվել է լիցենզավորման հանձնաժողովի անդամներ Ա. Ստեփանյանի և Տ. Գասպարյանի կողմից: Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց հանձնաժողովի քարտուղար Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

«ԱՎԱՆ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ	4 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝

Ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 9-ի N 1998-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի պահանջներին՝ ենթակա է լիցենզավորման:

Համաձայն «Լիցենզավորման մասին» օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

2.2 Քննարկվեց՝

«ՆԱՐ-ՍԸՓՈՐԹ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության /այսուհետ՝ Կազմակերպություն/ 2024 թվականի փետրվարի 15-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը՝ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ)

գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և գազաբալոնների պարբերական վկայագրման ներդիր տրամադրելու մասին՝ ՀՀ, Արմավիրի մարզ, համայնք Վաղարշապատ, ք. Էջմիածին, Չարենցի փողոց 31 գործունեության վայրում:

Ա. Ստեփանյանը ներկայացրեց, որ Կազմակերպությունը 2024 թվականի փետրվարի 15-ին լիազոր մարմին է ներկայացրել սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և գազաբալոնների պարբերական վկայագրման ներդիր տրամադրելու հայտ՝ ՀՀ, Արմավիրի մարզ, համայնք Վաղարշապատ, ք. Էջմիածին, Չարենցի փողոց 31 գործունեության վայրում:

Կազմակերպության արտադրական բազայի ուսումնասիրությունն իրականացվել է լիցենզավորման հանձնաժողովի անդամներ Խ. Սողոմոնյանի, Ա. Ստեփանյանի և Տ. Գասպարյանի կողմից: Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց հանձնաժողովի քարտուղար Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

«ՆԱՐ-ՍԸՓՈՐԹ» ՍՊԸ	4 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝

Ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 9-ի N 1998-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի պահանջներին՝ ենթակա է լիցենզավորման:

Համաձայն «Լիցենզավորման մասին» օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

3. Անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզիա և լիցենզիայի ներդիր տրամադրելու համար ներկայացված հայտի քննարկում

Քննարկվեց՝

«ՖԵՅՎԸՐԻԹ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության /այսուհետ՝ Կազմակերպություն/ 2024 թվականի փետրվարի 9-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը և փետրվարի 20-ին ի լրումն ներկայացված դիմումը՝ անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզիա և լիցենզիայի ներդիրներ տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը ներկայացրեց, որ Կազմակերպությունը 2024 թվականի փետրվարի 9-ին ներկայացրել է հայտ և հայտին կից փաստաթղթեր՝ անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզիա և լիցենզիայի երկու ներդիրներ տրամադրելու մասին: Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

«ՖԵՅՎԸՐԻԹ» ՍՊԸ	4 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝

Ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 11-ի N 1471-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի պահանջներին՝ ենթակա է լիցենզավորման:

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

4. Ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների իրականացման լիցենզիա և ներդիր տրամադրելու համար ներկայացված հայտի քննարկում:

Քննարկվեց՝

Ֆիզիկական անձ՝ Արտյոմ Վարուժանի Պողոսյանի 12.02.2024թ. և 22.02.2024թ. ներկայացված դիմումները՝ ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների իրականացման լիցենզիա և լիցենզիայի ներդիր տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը ներկայացրեց ֆիզիկական անձ՝ Արտյոմ Վարուժանի Պողոսյանի 12.02.2024թ. և 22.02.2024թ դիմումները՝ ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների իրականացման լիցենզիա և լիցենզիայի ներդիր տրամադրելու մասին և պարզաբանեց, որ նիստի քննարկմանը ներկայացված հայտը ուսումնասիրվել է լիցենզավորման և թույլտվությունների բաժնի կողմից, ստուգվել են ներկայացված ավտոմոբիլի տեխնիկական զննություն անցնելու փաստը և գազաբալոնների վկայագրման և ավտոմոբիլի սակաչափիչի ստուգաչափման փաստաթղթերի:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

ԱՐՏՅՈՄ ՎԱՐՈՒԺԱՆԻ ՊՈՂՈՍՅԱՆ	4 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝

Ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 11-ի N 1471-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի պահանջներին՝ ենթակա է լիցենզավորման:

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

5. Հանրապետությունում սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիաները և լիցենզիաների ներդիրներն ուժը կորցրած ճանաչելու համար ներկայացված հայտի քննարկում:

5.1Քննարկվեց՝

«ԹԵՍԹԻԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 07.02.2024թ. դիմումը՝ Հայաստանի Հանրապետությունում սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման N ԳԲ 00086 լիցենզիան և ներդիրն ուժը կորցրած ճանաչելու մասին:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված դիմումը և դիմումին կից փաստաթղթերը՝ N ԳԲ 00086 լիցենզիայի և N 0001 ներդիրի բնօրինակները:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

«ԹԵՍԹԻԴ» ՍՊԸ	4 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

5.2Քննարկվեց՝

«ԹԵՍԹԻԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 07.02.2024թ. դիմումը՝ Հայաստանի Հանրապետությունում սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման N ԳԲ 00089 լիցենզիան և ներդիրն ուժը կորցրած ճանաչելու մասին:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված դիմումը և դիմումին կից փաստաթղթերը՝ N ԳԲ 00089 լիցենզիայի և N 0001 ներդիրի բնօրինակները:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

«ԹԵՍԹԻԴ» ՍՊԸ	4 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

5.3Քննարկվեց՝

Անհատ ձեռնարկատեր ՀՈՒՆԱՆ ՌԱՖԻԿԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ 16.02.2024թ. դիմումը՝ Հայաստանի Հանրապետությունում սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման N ԳԲ 00072 լիցենզիան և ներդիրներն ուժը կորցրած ճանաչելու մասին:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված դիմումը և դիմումին կից փաստաթղթերը՝ N ԳԲ 00072 լիցենզիայի և N 0001 և N 0002 ներդիրների բնօրինակները:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

ԱՁ ՀՈՒՆԱՆ ՌԱՖԻԿԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ	4 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

5.4Քննարկվեց՝

«ՍԱՄ-ԽԱՉ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 28.02.2024թ. դիմումը՝ Հայաստանի Հանրապետությունում սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման N ԳԲ 00078 լիցենզիան և ներդիրներն ուժը կորցրած ճանաչելու մասին:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված դիմումը և դիմումին կից փաստաթղթերը՝ N ԳԲ 00078 լիցենզիայի և N 0001 ներդիրի բնօրինակները:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները

փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

«ՍԱՄ-ԽԱՉ» ՍՊԸ	4 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

6. Անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզիաները և լիցենզիաների ներդիրներն ուժը կորցրած ճանաչելու համար ներկայացված հայտերի քննարկում:

6.1 Քննարկվեց՝

«ՎԱՀԵ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 07.02.2024թ. դիմումը՝ անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների իրականացման ՏԾ N 05365 լիցենզիան և N 00001 ներդիրն ուժը կորցրած ճանաչելու մասին:

Ա. Ստեփանյանը ներկայացրեց «ՎԱՀԵ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 07.02.2024թ. դիմումը՝ անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների իրականացման ՏԾ N 05365 լիցենզիան և N 00001 ներդիրն ուժը կորցրած ճանաչելու մասին:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված դիմումը և դիմումին կից փաստաթղթերը՝ ՏԾ N 05365 լիցենզիայի բնօրինակը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

«ՎԱՀԵ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ» ՍՊԸ	4 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

6.2 Քննարկվեց՝

Անհատ ձեռնարկատեր ԱՐՍԵՆ ԲԱՐԵՂԱՄՅԱՆԻ 12.02.2024թ. դիմումը՝ անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների իրականացման ՏԾ N 05314 լիցենզիան և N 00001, N 00002, N 00003, N 00005 և N 00007 ներդիրներն ուժը կորցրած ճանաչելու մասին:

Ա. Ստեփանյանը ներկայացրեց Անհատ ձեռնարկատեր ԱՐՍԵՆ ԲԱՐԵՂԱՄՅԱՆԻ 12.02.2024թ. դիմումը՝ անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների իրականացման ՏԾ N 05314 լիցենզիան և N 00001, N 00002, N 00003, N 00005 և N 00007 ներդիրներն ուժը կորցրած ճանաչելու մասին:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված դիմումը և դիմումին կից փաստաթղթերը՝ ՏԾ N 05431 լիցենզիայի ՏԾ N 05314 լիցենզիան և N 00001, N 00002, N 00003, N 00005 և N 00007 ներդիրների բնօրինակները:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

ԱՁ ԱՐՍԵՆ ԲԱՐԵՂԱՄՅԱՆ	4 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

6.3 Քննարկվեց՝

«ԼԵԳԻՈՆ ՍԵՐՎԻՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 14.02.2024թ. դիմումը՝ անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների իրականացման ՏԾ N 05444 լիցենզիան և N 00001 ներդիրն ուժը կորցրած ճանաչելու մասին:

Ա. Ստեփանյանը ներկայացրեց «ԼԵԳԻՈՆ ՍԵՐՎԻՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 14.02.2024թ. դիմումը՝ անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների իրականացման ՏԾ N 05444 լիցենզիան և N 00001 ներդիրն ուժը կորցրած ճանաչելու մասին:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված դիմումը և դիմումին կից փաստաթղթերը՝ ՏԾ N 05365 լիցենզիայի և N 00001 ներդիրի բնօրինակները:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

«ՎԱՀԵ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ» ՍՊԸ	4 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության
լիցենզավորման հանձնաժողովի
նախագահի տեղակալ Ա. Խաչատրյան

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության
լիցենզավորման հանձնաժողովի քարտուղար Ա. Ստեփանյան